Լրամշակված տարբերակ
Երկրորդ ընթերցում

Կ-720[1]-02.09.2020,30.09.2020-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123.1-ին հոդվածի 2-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ բոլոր դեպքերում առկայծող փարոսիկների և հատուկ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների բռնագրավմամբ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 123.5-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի սանկցիան ***«ժամկետով» բառից հետո*** լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով,

2) 5-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»,

3) 10-րդ մասի սանկցիան ***«ժամկետով» բառից հետո*** լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 17-րդ մաս.

«17. Սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

Հոդված 3. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 31-րդ մասի սանկցիան ***«ժամկետով» բառից հետո*** լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիան ***«ժամկետով» բառից հետո*** լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տրանսպորտային միջոցի (բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների) վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով, և տուգանային միավորի կիրառում՝ ***0.5*** միավոր:»:

Հոդված 7. Օրենսգրքի 264-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Այնպիսի խախտում կատարելու դեպքում, որի համար սույն օրենսգրքին համապատասխան կարող է վարչական տույժ նշանակվել տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու ձևով, վարորդից վերցվում է վարորդական վկայականը մինչև գործի վերաբերյալ որոշում կայացնելը և տրվում է տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու որոշում կայացնելու դեպքում վարորդական վկայականը չի վերադարձվում: Սույն օրենսգրքի 123, 123^1, 123^3 հոդվածներով, 123^4 հոդվածի առաջին և երկրորդ մասերով, 123^5, 123.6, 123.7, 124, 124^1, 124^2, 124^3, 124^4, 124^5, 124^6, 125, 126 և 129.2 հոդվածներով նախատեսված

իրավախախտում կատարած Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող անձանց վարորդական վկայականները վերցվում են մինչև գործով կայացված որոշման կատարումը՝ տալով տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Ժամանակավոր թույլտվության գործողությունը երկարաձգվում է մինչև գանգատարկման համար սահմանված ժամկետի լրանալը, կամ գանգատի առթիվ որոշման ընդունումը:»:

Հոդված 8. Օրենսգրքի 310-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «տասնհինգօրյա ժամկետում,» բառերից հետո լրացնել «իսկ սույն օրենսգրքի 123.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 140 հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում սույն օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ չներկայացվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում,» բառերով,

2) 3-րդ մասի ***2-րդ*** պարբերությունում «123.1 հոդվածի երկրորդ և երրորդ մասերով, 140,» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 123.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 140 հոդվածի 5-րդ մասով,» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 315-րդ հոդվածը լրացնել նոր՝ ***6-րդ*** մասով հետևյալ ***բովանդակությամբ.***

«Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու մասին տեղեկատվությունը վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում մուտքագրելուն զուգահեռ միջոցներ է ձեռնարկվում վարորդական վկայականը և նրան կից կտրոնը վերցնելու համար, եթե վարորդը զրկված է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից:»:

Հոդված 10. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ***պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:***

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված տուգանային միավորը, որպես վարչական տույժ, կիրառվում է միայն «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով քննության ենթակա գործերով:

3. 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը՝ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով քննության ենթակա չհանդիսացող գործերով հանված տուգանային միավորները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վերականգնվում են:

4. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ և 9-րդ հոդվածները, ինչպես նաև 7-րդ հոդվածով օրենսգրքի 264-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասի 1-ին և 2-րդ նախադասությունները գործում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարված փոփոխությունների

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123.1-ին հոդվածի 2-րդ մասի սանկցիան շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ բոլոր դեպքերում առկայծող փարոսիկների եւ հատուկ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների բռնագրավմամբ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 123.5-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի սանկցիան ***«ժամկետով» բառից հետո*** լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով,

2) 5-րդ մասի սանկցիան շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»,

3) 10-րդ մասի սանկցիան ***«ժամկետով» բառից հետո*** լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով,

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 17-րդ մաս.

«17. Սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

Հոդված 3. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 31-րդ մասի սանկցիան ***«ժամկետով» բառից հետո*** լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիան ***«ժամկետով» բառից հետո*** լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Տրանսպորտային միջոցի (բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների) վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով, եւ տուգանային միավորի կիրառում՝ ~~1 միավոր~~ ***0.5 միավոր***:»:

Հոդված 7. Օրենսգրքի 264-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Այնպիսի խախտում կատարելու դեպքում, որի համար սույն օրենսգրքին համապատասխան կարող է վարչական տույժ նշանակվել տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու ձեւով, վարորդից վերցվում է վարորդական վկայականը մինչեւ գործի վերաբերյալ որոշում կայացնելը եւ տրվում է տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու որոշում կայացնելու դեպքում վարորդական վկայականը չի վերադարձվում: Սույն օրենսգրքի 123, 123.1, 123.3 հոդվածներով, 123.4 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով, 123.5, 123.6, 123.7, 124, 124.1, 124.2, 124.3, 124.4, 124.5, 124.6, 125, 126 եւ 129.2 հոդվածներով նախատեսված իրավախախտում կատարած Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող անձանց վարորդական վկայականները վերցվում են մինչեւ գործով կայացված որոշման կատարումը՝ տալով տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Ժամանակավոր թույլտվության գործողությունը երկարաձգվում է մինչեւ գանգատարկման համար սահմանված ժամկետի լրանալը, կամ գանգատի առթիվ որոշման ընդունումը:»:

Հոդված 8. Օրենսգրքի 310-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «տասնհինգօրյա ժամկետում,» բառերից հետո լրացնել «իսկ սույն օրենսգրքի 123.1 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ 140 հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում սույն օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ չներկայացվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում,» բառերով,

2) 3-րդ մասի ~~3-րդ~~ ***2-րդ*** պարբերությունում «123.1 հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերով, 140,» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 123.1 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 140 հոդվածի 5-րդ մասով,» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 315-րդ հոդվածը լրացնել նոր՝ ***6-րդ*** մասով հետևյալ ~~խմբագրությամբ~~ ***բովանդակությամբ***.

«Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու մասին տեղեկատվությունը վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում մուտքագրելուն զուգահեռ միջոցներ է ձեռնարկվում վարորդական վկայականը եւ նրան կից կտրոնը վերցնելու համար, եթե վարորդը զրկված է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից:»:

Հոդված 10. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրը~~ ***պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից***:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչեւ 2022 թվականի հուլիսի 1-ը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված տուգանային միավորը, որպես վարչական տույժ, կիրառվում է միայն «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով քննության ենթակա գործերով:

3. 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը՝ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով քննության ենթակա չհանդիսացող գործերով հանված տուգանային միավորները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վերականգնվում են:

4. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ և 9-րդ հոդվածները, ինչպես նաև 7-րդ հոդվածով օրենսգրքի 264-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասի 1-ին եւ 2-րդ նախադասությունները գործում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-720[1]-02.09.2020,30.09.2020-ՊԱ-011/2) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածներ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդվածի 1-ին կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե որ բառից հետո պետք է կատարել լրացումը: Այս դիտողությունը վերաբերում է նաև Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետին, Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներին:	Ընդունվել են: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
		Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետում «3-րդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «2-րդ» բառով, քանի որ տվյալ փոփոխությունը վերաբերում է Օրենսգրքի 310-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորմանը:	Ընդունվել է, Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
		Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածում «խմբագրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «բովանդակությամբ» բառով, իսկ «նոր» բառից հետո լրացնել «6-րդ» բառերը:	Ընդունվել է, Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

			Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, մասնավորապես՝ «պաշտոնական հրապարակման օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:	Ընդունվել է, Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
	<< ԱԺ պատգամավոր Գ.Գորգիսյան	**Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս**	Տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելու համար սահմանվող **1 տուգանային միավորի փոխարեն սահմանել 0.5 միավոր,** հաշվի առնելով հանրային առավել նվազ վտանգավորությունը հասարակական տրանսպորտի վարորդների կողմից նույն արարքը կատարելու համեմատությամբ:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է